Նախագիծ
Երկրորդ ընթերցում
Լրամշակված տարբերակ

Կ-907[2]-23.03.2021-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 2018 թվականի փետրվարի 9-ի ՀՕ-110-Ն օրենսգրքի 129-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գնումների հետ կապված վեճերով, ինչպես նաև «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի հետ կապված վեճերով չի կարող կիրառվել հայցի ապահովման այնպիսի միջոց, որը կհանգեցնի գնման գործընթացի, գնման պայմանագրի կատարման, մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի կամ ՊՄԳ ծրագրի իրականացման կասեցմանը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Երկրորդ ընթերցում
Լրամշակված տարբերակ

Կ-907[2]-23.03.2021-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 2018 թվականի փետրվարի 9-ի ՀՕ-110-Ն ~~քաղաքացիական դատավարության~~ օրենսգրքի 129-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գնումների հետ կապված վեճերով, ինչպես նաև «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի հետ կապված վեճերով չի կարող կիրառվել հայցի ապահովման այնպիսի միջոց, որը կհանգեցնի գնման գործընթացի, գնման պայմանագրի կատարման, մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի կամ ՊՄԳ ծրագրի իրականացման կասեցմանը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»» (Կ-907-23.03.2021-ՏՀ-011/1), ««ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-907[1]-23.03.2021-ՏՀ-011/1), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-907[2]-23.03.2021-ՏՀ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ					
1.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին կետ**	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի 2-րդ նախադասության մեջ կատարել մասնակի խմբագրական փոփոխություններ, մասնավորապես՝ 1. «չեն կարող» բառերը փոխարինել «չի կարող» բառերով, 2. նախադասության մեջ «ընկերությունները» բառերը փոխարինել «ընկերությունը» բառերով, 3. «որոնցում» բառը փոխարինել «որում» բառով, 4. նախադասության մեջ «ընկերությունների» բառերը փոխարինել են «ընկերության» բառերով, 5. «կոնսորցիումները» բառերը փոխարինել «կոնսորցիումը» բառերով:	Ընդունվել է Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի 2-րդ նախադասությունը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Ընդ որում, հայտատու չի կարող հանդիսանալ Հայաստանի Հանրապետության կամ համայնքի ուղղակի կամ անուղղակի բաժնեմասնակցությամբ ընկերությունը, կամ այն ընկերությունը, որում Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը որևէ այլ՝ օրենքով չարգելված ձևով, հնարավորություն ունի կանխորոշելու ընկերության որոշումները կամ վերոնշյալ ընկերության մասնակցությամբ կոնսորցիումը.».	Ընդունվել է
2.		**Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ կետ, 4-րդ կետ, 5-րդ կետ և 6-րդ**	1. Նախագծով նախատեսված են մի շարք կարգավորումներ և հասկացություններ, որոնք	Ընդունվել է մասնակի Նախագծում կատարվել են հետևյալ փոփոխություններ,	Ընդունվել է

			միանշանակ չեն ընկալվում: 2. Նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ մասով «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր 24.4-րդ կետում «առաջարկ հրավերի հիման վրա» բառերն առաջարկում ենք փոխարինել «առաջարկ ներկայացնելու հրավերի հիման վրա» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջները և Նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ մասով Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր 24.2-րդ կետում ամրագրված կարգավորումը: 3. Նախագծի 4-րդ հոդվածով Օրենքի 2-րդ հոդվածում լրացվող 24.4-րդ կետով սահմանված է հայտի հասկացությունը: Այն սահմանված է որպես հրավերի հիման վրա հայտատուի կողմից ներկայացվող առաջարկ: Նշված ձևակերպումը բավարար չափով որոշակի չէ և միանշանակ չի ընկալվում:	մասնավորապես՝ 1. Նախագծի 4-րդ հոդվածը լրացվել է նոր 3-րդ մասով. «3. 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. 13) ՊՄԳ ծրագիր՝ մասնավոր հատվածի մասնակցությամբ հանրային ենթակառուցվածքի կառուցմանը և (կամ) բարելավմանը և (կամ) շահագործմանը և (կամ) տեխնիկական սպասարկմանը միտված ծրագիր, որի ռիսկերը բաշխված են հանրային գործընկերոջ և մասնավոր հատվածի միջև, և որն ունի առնվազն հինգ տարվա տևողություն՝ հաշվարկված ՊՄԳ պայմանագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր նախապայմանների (conditions precedent) իրականացման օրվանից.»: 2. Նախագծի 4-րդ հոդվածը լրացվել է նոր 4-րդ մասով. «4. 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «16) ՊՄԳ պայմանական պարտավորությունների թույլատրելի սահմանաչափ՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կնքված ՊՄԳ պայմանագրերի գծով Հայաստանի Հանրապետության պայմանական պարտավորությունների առավելագույն սահմանաչափ: Հայաստանի Հանրապետության պայմանական	

				պարտավորությունների հաշվարկման և գնահատման մեթոդաբանությունը սահմանում է Կառավարությունը.»: 3. Նախագծի 4-րդ հոդվածը լրացվել է նոր 5-րդ մասով. «5. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 16. 1-րդ կետով 16. 1) ՊՄԳ ուղղակի պարտավորությունների թույլատրելի սահմանաչափ՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կնքված ՊՄԳ պայմանագրերի գծով Կառավարության կողմից սահմանվող Հայաստանի Հանրապետության ուղղակի պարտավորությունների տարեկան սահմանաչափ:»: 4. Նախագծի «3. » մասը փոխարինվել է «5. » մասով: 5. Նախագծի «4. » մասը փոխարինվել է «7. » մասով և 7-րդ մասում կատարվել են հետևյալ փոփոխությունները. 1. 24. 1 կետում՝ «որակավորման հրավեր (Request for Qualification, RFQ)» բառերը փոխարինվել են «որակավորման հարցում (Request for Qualification, RFQ)» բառերով, 2. 24. 2 կետում «առաջարկ ներկայացնելու հրավեր Request for Proposal, RFP» բառերը փոխարինվել են «առաջարկի հարցում Request for Proposal, RFP» բառերով,	

				6. Հաշվի առնելով 7-րդ մասի 24 . 1 և 24. . 2 կետերում առաջարկվող փոփոխությունները Նախագծում «իրավեր» և «ներկայացնելու իրավեր» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինվել են «հարցում» բառերով: 7. 24.4 կետում կատարվել է խմբագրական փոփոխություն և «ներկայացվող առաջարկ» բառերից հետո շարադրվել է հետևյալ կերպ. «, որը ներառում է ֆինանսական առաջարկ և (կամ) կարող է ներառել տեխնիկական առաջարկ.»: 7. Նախագծի 4-րդ հոդվածը լրացվել է նոր 8-րդ մասով. «26) ֆիսկալ առումով մատչելի (fiscally affordable)՝ ՊՄԳ ծրագիրը չի հանգեցնում ՊՄԳ պայմանական և/կամ ուղղակի պարտավորությունների թույլատրելի սահմանաչափի գերազանցմանը՝ սահմանված լինելու դեպքում:»: 8. Նախագծի 5-րդ հոդվածում կատարվել են հետևյալ փոփոխությունները. ***«Հոդված 5.*** Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1. Կառավարության կողմից ՊՄԳ ծրագրի իրականացման վերաբերյալ որոշման կայացման համար անհրաժեշտ է, որպեսզի	

				ՊՄԳ ծրագիրը բավարարի հետևյալ բոլոր չափանիշներին. 1) ապահովի հանրային և մասնավոր գործընկերների միջև ռիսկերի բաշխում՝ համաձայն ՊՄԳ ընթացակարգի. 2) ապահովի Հայաստանի Հանրապետության համար տնտեսական շահութաբերություն, այսինքն՝ ունենա տնտեսական շահութաբերության ներքին դրույք, որը կգերազանցի ՊՄԳ ընթացակարգով սահմանված բազային դրույքը. 3) գնահատված և ընտրված լինի որպես իրականացման ենթակա ծրագիր հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, գնահատման և առաջնահերթությունների որոշման կարգին համապատասխան և հաստատված լինի Կառավարության կողմից. 4) լինի ֆիսկալ առումով մատչելի. 5) կիրառելիության դեպքում ունենա ՓդԱ, որը մեծ է զրոյից: 2. Հարկաբյուջետային ռիսկերի կառավարման ու ֆիսկալ կայունության ապահովման խնդիրներից ելնելով՝ լիազոր մարմինը սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված կարգով իրականացված վերլուծությամբ կարող է տալ բացասական եզրակացություն, եթե հաշվարկների արդյունքում պարզվի, որ կնքվելիք	

				պայմանագրի գծով ՊՄԳ պայմանական պարտավորությունների և/կամ ուղղակի պարտավորությունների յուրաքանչյուր տարվա հանրագումարը պայմանագրի իրականացման ժամկետի որևէ տարում կհանգեցնի ՊՄԳ պայմանական պարտավորությունների և/կամ ուղղակի պարտավորությունների թույլատրելի սահմանաչափերի գերազանցման: 3. Որոշելու համար՝ արդյոք ՊՄԳ պայմանական պարտավորությունների և/կամ ուղղակի պարտավորությունների թույլատրելի սահմանաչափը կգերազանցվի, հաշվի է առնվում հետևյալը. 1) սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կնքված ՊՄԳ պայմանագրերի համաձայն իրականացվող ՊՄԳ ծրագրերը. 2) սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ՊՄԳ ծրագրերը, որոնց վերաբերյալ ընդունվել է մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգ անցկացնելու մասին որոշում: 9. Նախագիծը լրացվել է նոր 6-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 6. Օրենքի 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Կառավարության որոշմամբ սահմանվում են ՊՄԳ ծրագրերի շրջանակում մատուցվող հանրային ծառայությունների	

				ոլորտները:»: 10. Նախագիծը լրացվել է նոր 8-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 8. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը «պայմանական» բառից հետո լրացնել «և ուղղակի» բառերով, հետևյալ խմբագրությամբ. «2) ՊՄԳ ծրագրերը ենթարկում է ընթացիկ մշտադիտարկման՝ պայմանական և ուղղակի պարտավորությունների տեսանկյունից.»: 11. Նախագիծը լրացվել է նոր 12-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 11. Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. ՊՄԳ ծրագրի նախագիծը վերլուծության է ենթարկում լիազոր մարմինը, որից հետո լիազոր մարմինը եզրակացություն է տալիս ՊՄԳ ծրագրի՝ սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 2-րդ մասով սահմանված չափանիշներին համապատասխանության վերաբերյալ:»:	
3.		**Նախագծի 7-րդ, 8-րդ, 9-րդ 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածներ**		Հաշվի առնելով այն, որ Նախագիծը լրացվել է նոր 6-րդ. 8-րդ և 12-րդ հոդվածներով, Նախագծի 6-16-րդ հոդվածները համապատասխանաբար խմբագրվել և փոխարինվել են 7-19-րդ հոդվածներով:	

4.		**Նախագծի 9-րդ հոդված, 2.1-2.4-րդ կետեր**	Նախագծի 9-րդ հոդվածում «2.1-2.5-րդ կետերով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «2.1-2.4-րդ կետերով» բառերով:	Ընդունվել է Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
5.		**Նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ կետ**	Նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մասում «5-12-րդ մասեր» բառերն անհրաժեշտ է փոխարինել «5-13-րդ մասեր» բառերով:	Ընդունվել է Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
6.		**Նախագծի 11-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետ**	Նախագծի 10-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետում կատարել խմբագրական փոփոխություններ	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն, մասնավորապես՝ Նախագծի 10-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի 2-րդ նախադասության մեջ «Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված» բառերը փոխարինվել են «Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված» բառերով և «իսկ 4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված չափանիշին» բառերը փոխարինվել են «իսկ 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված չափանիշին» բառերով:	Ընդունվել է
7.		**Նախագծի 14-րդ հոդված**	Նախագծի 14-րդ հոդվածում «ընթացակարգեր» բառն անհրաժեշտ է փոխարինել «ընթացակարգերին» բառով, իսկ «ընթացակարգ» բառը՝ «ընթացակարգին» բառով:	Ընդունվել է Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
8.		**Նախագծի 15-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 14. 2-րդ հոդվածի 1-ին մաս**	Նախագծի 15-րդ հոդվածի նոր լրացվող 14. 2-րդ հոդվածի 1-ին մասում կատարվել է մասնակի խմբագրում:	Ընդունվել է Նախագծի 15-րդ հոդվածի նոր լրացվող 14. 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասության «ՊՄԳ ընթացակարգով» բառերից հետո «դրանցով սահմանված կարգով» բառերը փոխարինվել են «կամ այլ իրավական ակտերով» բառերով:	Ընդունվել է

9.		**Նախագծի 15-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 14.4-րդ հոդվածի 2-րդ մաս**	Նախագծի 15-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 14.4-րդ հոդվածի 2-րդ մասում «պաշտոնական լեզուն կարող է լինել» բառերից հետո լրացնել «նաև» բառը:	Ընդունվել է Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
10.		**Նախագծի 15-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 14.5-րդ հոդված**	Նախագծի 15-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 14.5-րդ հոդվածի կետերի և ենթակետերի համարակալումն անհրաժեշտ է վերանայել՝ համապատասխանեցնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջներին:	Ընդունվել է Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
11.		**Նախագծի 15-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 14.5-րդ հոդվածի 2-րդ մաս**	Նախագծի 15-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 14.5-րդ հոդվածի 2-րդ մասում կատարել խմբագրական փոփոխություն:	Ընդունվել է Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն, մասնավորապես՝ «, որակավորման հրավերը հասանելի են անորոշ թվով անձանց» բառերը փոխարինվել են «, որակավորման հարցումը հրապարակային են և հասանելի:»:	Ընդունվել է
12.		**Նախագծի 15-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 14. 8-րդ հոդվածի 5-րդ մաս**	Նախագծի 15-րդ հոդվածի լրացվող նոր 14. 8-րդ հոդվածի 5-րդ մասում կատարվել են մասնակի խմբագրումներ:	Նախագծի 15-րդ հոդվածի լրացվող նոր 14. 8-րդ հոդվածի 5-րդ մասի նախադասության 1-ին հատվածի «Նախքան առաջարկ ներկայացնելու հրավերի՝ որակավորված հայտատուներին տրամադրումը» բառերը փոխարինվել են «Նախքան առաջարկի հարցման փուլը» բառերով:	
13.		**Նախագծի 15-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 14.8-րդ հոդվածի 6-րդ մաս և 14.12-րդ հոդվածի 1-ին մաս**	Նախագծի 15-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 14.8-րդ հոդվածի 6-րդ մասում նշված «մրցույթում հաղթող հայտատուն» բառերն անհրաժեշտ է վերանայել՝ նկատի ունենալով Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվող կարգավորումը:	Ընդունվել է Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

			Նույն դիտարկումը վերաբերելի է նաև Նախագծի 15-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 14.12-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված «մրցույթ» բառին:		

14.		**Նախագծի 4-րդ հոդվածի 6-րդ մասի 24. 6-րդ կետ, Նախագծի 11-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասեր, Նախագծի 15-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 14. 2-րդ հոդվածի 1-ին մաս, Նախագծի 15-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 14. 5-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 6-րդ մասեր, Նախագծի 15-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 14-11-րդ հոդվածի 2-րդ մաս, Նախագծի 15-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 14. 12-րդ հոդվածի 1-ին մաս**	«Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ) «Հայաստանի Հանրապետության կառավարություն» բառերը փոխարինել «Կառավարություն» բառով՝ հիմք ընդունելով «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքում (այսուհետ նաեւ՝ Օրենք) կիրառված հասկացությունները և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն, մասնավորապես՝ նշված հոդվածներում «Հայաստանի Հանրապետության կառավարություն» բառերը փոխարինվել են «Կառավարություն» բառով:	Ընդունվել է

«Գնումների մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ					
15.	ՀՀ կառավարություն	**«Գնումների մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված**	«Գնումների մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով «Գնումների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասում նոր լրացվող 4-րդ կետի տեքստում «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքի կրճատ անվանման հիշատակումից առաջարկում ենք հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը՝ օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ					
16.	ՀՀ կառավարություն	**Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի լրիվ անվանման հիշատակման մեջ առաջարկում ենք նշել նաեւ օրենքի հերթական համարը՝ ՀՕ-110-Ն՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը՝ օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը և «օրենք» բառը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

Անցումային դրույթներ «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի և «Գնումների մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծերի				
17.	ՀՀ կառավարություն	Նախագծի 15-րդ հոդվածով նոր խմբագրությամբ է շարադրվում Օրենքի՝ անցումային դրույթներին վերաբերող 30-րդ հոդվածը, ինչի արդյունքում նախատեսվում է հետևյալ կարգավորումը. «1. Սույն օրենքի դրույթները չեն տարածվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ներդրումային ծրագրերով իրականացվող կամ դրանց հիման վրա իրականացվելիք ՊՄԳ ծրագրերի նկատմամբ: Այդ ծրագրերի իրականացման կարգը և դրանց նկատմամբ կիրառելի պահանջները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: 2. ՊՄԳ ընթացակարգի և ՊՄԳ պարտավորությունների թույլատրելի սահմանաչափի վերաբերյալ սահմանված կարգավորումներն ընդունվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 180 օրացուցային օրվա ընթացքում:»: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ և 8-րդ մասերի համաձայն՝ օրենսդրական ակտերում նորմերը շարադրվում են հերթական համար ունեցող հոդվածների տեսքով, հոդվածի համարից առաջ գրվում է «Հոդված» բառը, օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի, հոդվածների վերնագրերը համապատասխանում են հոդվածների բովանդակությանը: Հիմք ընդունելով նշվածն՝ առաջարկում ենք Օրենքի 30-րդ հոդվածը նոր խմբագրությամբ շարադրելիս նախատեսել նաև հոդվածի հերթական համարը և վերնագիրը:	Ընդունվել է: **1. «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի** նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն և Նախագծի Անցումային դրույթները շարադրվել են հետևյալ խմագրությամբ. «***Հոդված 16.*** Ուժը կորցրած ճանաչել օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասը: ***Հոդված 17. Անցումային դրույթներ*** 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: 2. «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և սույն օրենքի դրույթները չեն տարածվում մինչև «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելը Կառավարության կողմից հաստատված ներդրումային ծրագրերով իրականացվող կամ դրանց հիման վրա իրականացվելիք ՊՄԳ ծրագրերի նկատմամբ: Այդ ծրագրերի իրականացման կարգը և դրանց նկատմամբ կիրառելի պահանջները սահմանվում են Կառավարության կողմից:	Ընդունվել է
18.		1. Նախագծի 15-րդ հոդվածով առաջարկվում է Օրենքի 30-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ: Այս առումով նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նախագծի 15-րդ հոդվածով նոր խմբագրությամբ է շարադրվում արդեն իսկ ընդունված և ուժի մեջ մտած իրավական ակտի, այն է՝ «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքի իրագործված անցումային դրույթը, Օրենքի 30-րդ հոդվածը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածում ամրագրված իրավակարգավորումները՝ առաջարկում ենք Նախագծի 15-րդ հոդվածով առաջարկվող կարգավորումը նախատեսել Նախագծի անցումային դրույթներում: Նույն դիտողությունը վերաբերելի է նաև «Գնումների մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 4-րդ հոդվածում ամրագրված կարգավորմանը: Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում նշել, որ «Նորմատիվ		

		իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված կարգավորման համաձայն՝ եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ***ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են նաև՝ օրենսդրական ակտի այն մասերը, որոնք գործելու են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը:***	3. ՊՄԳ ընթացակարգի և ՊՄԳ պարտավորությունների թույլատրելի սահմանաչափի վերաբերյալ «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն օրենքով սահմանված կարգավորումներն ընդունվում են Կառավարության որոշումներով՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 180 օրացուցային օրվա ընթացքում: 4. Սույն օրենքի՝ ՊՄԳ ընթացակարգին և ՊՄԳ պարտավորությունների թույլատրելի սահմանաչափի վերաբերյալ կարգավորումներին հղում պարունակող դրույթները գործում են համապատասխան կարգավորումներն ուժի մեջ մտնելու պահից:»:	
19.		1. Նախագծի 15-րդ հոդվածով առաջարկվում է Օրենքի 30-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ: Այս առումով նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նախագծի 15-րդ հոդվածով նոր խմբագրությամբ է շարադրվում արդեն իսկ ընդունված և ուժի մեջ մտած իրավական ակտի, այն է՝ «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքի իրագործված անցումային դրույթը, Օրենքի 30-րդ հոդվածը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածում ամրագրված իրավակարգավորումները՝ առաջարկում ենք Նախագծի 15-րդ հոդվածով առաջարկվող կարգավորումը նախատեսել Նախագծի անցումային դրույթներում: Նույն դիտողությունը վերաբերելի է նաև «Գնումների մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 4-րդ հոդվածում ամրագրված կարգավորմանը: Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում նշել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված կարգավորման համաձայն՝ եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ***ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են նաև՝ օրենսդրական ակտի այն մասերը, որոնք գործելու են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը:***	**2. «Գնումների մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.** ***«Հոդված 4.*** Օրենքի 57-րդ հոդվածը լրացնել 4. 1 մասով և շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4.1. Սույն օրենքի դրույթները չեն տարածվում «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումից մինչև նույն օրենքի ուժի մեջ մտնելը պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից	
20.		«Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ նաև՝ Նախագիծ) 15-րդ հոդվածով նոր խմբագրությամբ է շարադրվում «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) անցումային դրույթներին վերաբերող 30-րդ հոդվածը, ինչի արդյունքում նախատեսվում է հետևյալ կարգավորումը.		

		«1. Սույն օրենքի դրույթները չեն տարածվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ներդրումային ծրագրերով իրականացվող կամ դրանց հիման վրա իրականացվելիք ՊՄԳ ծրագրերի նկատմամբ: ***Այդ ծրագրերի իրականացման կարգը և դրանց նկատմամբ կիրառելի պահանջները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:*** *2. ՊՄԳ ընթացակարգի և ՊՄԳ պարտավորությունների թույլատրելի սահմանաչափի վերաբերյալ սահմանված կարգավորումներն ընդունվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 180 օրացուցային օրվա ընթացքում:»:* «Գնումների մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով «Գնումների մասին» օրենքի անցումային դրույթին վերաբերող 57-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրվում է նոր խմբագրությամբ. *«4. Սույն օրենքի և «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-206-Ն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև* ***2020 թվականի դեկտեմբերի 31-ը*** *պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում պետության կնքած այն փոխըմբռնման հուշագրերով, նախնական պայմանագրերով և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ներդրումային ծրագրերով նախատեսված գործարքների վրա, որոնց վերաբերյալ վերջնական պայմանագրերը պետք է կնքվեն մինչև 2022 թվականի հունվարի 1-ը:»:* Նախագծերի փաթեթով կատարվող փոփոխությունների վերաբերյալ հարկ է նշել հետևյալը. **1.** «Գնումների մասին» օրենքի անցումային դրույթին վերաբերող 57-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է հետևյալը. *«4. Սույն օրենքի և «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-206-Ն օրենքի պահանջները չեն տարածվում* ***մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը*** *պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում պետության կնքած այն փոխըմբռնման հուշագրերով և նախնական պայմանագրերով նախատեսված գործարքների վրա, որոնց վերաբերյալ վերջնական պայմանագրերը պետք է կնքվեն սույն օրենքն ուժի մեջ մտնելուց երկու տարվա ընթացքում:»:* «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքի անցումային դրույթներին վերաբերող 30-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Սույն օրենքի դրույթները չեն տարածվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը հանրային և մասնավոր գործընկերների միջև կնքված ՊՄԳ պայմանագրերի և ՊՄԳ ծրագրերի մասով հայտարարված մրցույթների վրա:* *2. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 7-րդ կետերով,*	հաստատված ներդրումային ծրագրերով նախատեսված գործարքների վրա, որոնց վերաբերյալ վերջնական պայմանագրերը պետք է կնքվեն մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը:»:	

		2-րդ մասով, 5-րդ հոդվածի 1-ին մասով, 10-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով, 11-րդ հոդվածի 1-ին մասով, 12-րդ հոդվածի, 24-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, 25-րդ հոդվածի 2-րդ մասով, 26-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորումներն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 90 օրացուցային օրվա ընթացքում։»։ Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՕ-21-Ն օրենքը ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին և ուժի մեջ մտել 2017 թվականի ապրիլի 25-ին։ ՝ «Գնումների մասին» օրենքի 57-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն մինչև 2017 թվականի ապրիլի 25-ը *պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում պետության կնքած այն փոխըմբռնման հուշագրերով և նախնական պայմանագրերով նախատեսված գործարքների վրա, որոնց վերաբերյալ վերջնական պայմանագրերը պետք է կնքվեն օրենքն ուժի մեջ մտնելուց երկու տարվա ընթացքում,* չեն տարածվում «Գնումների մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-21-Ն օրենքի դրույթները։ 2017 թվականի ապրիլի 25-ից հետո ծագած իրավահարաբերությունները, որոնք ենթակա էին կարգավորման «Գնումների մասին» օրենքով նախատեսված կարգավորումներով, իրացված և այդ պահին գործող օրենքին ենթադրյալ համապատասխան կարգավորված հարաբերություններ են։ «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասը արդեն իսկ իրացված անցումային դրույթ է։ Միաժամանակ, հարկ է նկատել, որ Նախագծի 15-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող հոդվածի 2-րդ մասում 180-օրյա ժամկետը չի առնչվում Նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետին այլ արդեն իսկ ընդունված և ուժի մեջ մտած Օրենքի՝ ուժի մեջ մտնելու ժամկետ՝ 2020 թվականի հունվարի 1։ **2.** Հայաստանի Հանրապետության սահմանադրության (այսուհետ նաև՝ Սահմանադրություն) *մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին վերաբերող* 2-րդ գլխի 74-րդ հոդվածի համաձայն՝հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ։ Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ **իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր**։ Օրենքները որոշակիացնում են սահմանադրական իրավունքների իրականացման կարգը, սահմանում են լրացուցիչ երաշխիքներ դրանց համար։ Օրենսդիր իշխանության դերը այս հարցում հատկապես կարևոր է, քանի որ մարդու իրավունքների ապահովման, պաշտպանության հետ կապված գրեթե բոլոր հարցերի կարգավորումը վերապահված է օրենքներին։ Ընդ որում,		

		որպես կանոն, բացառապես օրենքներով են սահմանվում մարդու իրավունքներն իրականացնելու, պաշտպանելու պայմանները և կարգը, իրավունքների սահմանափակումները: Այս համատեքստում Սահմանադրությունը ամրագրում է հանրային իշխանության պարտականությունը, որը առաջին հերթին վերաբերում է օրենսդիր մարմնին. հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները պետք է սահմանեն դրանց արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Որպեսզի նորմատիվ կարգավորումը լինի արդյունավետ և ծառայի սահմանադրական հիմնական իրավունքների ամրագրմամբ հետապնդվող նպատակներին, այն պետք է ներառի մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների՝ 1) իրականացման սահմաններն ու եղանակները որոշելը, 2) սահմանափակման կանոնները, 3) իրացման տարբերակված ռեժիմները, 4) պաշտպանության և պահպանության ընթացակարգերը, 5) խախտման համար պատասխանատվության և հարկադրանքի այլ միջոցները, 6) խախտումների վերականգնման և պատճառված վնասի հատուցման ձևերի ու չափերի սահմանումը, 7) հնարավոր խախտումների կանխման և նախականխման միջոցների թվարկումը: Միայն օրենսդիր իշխանությունն է իրավասու որոշել սահմանափակումների **շրջանակներն ու բնույթը**՝ որպես համընդհանուր պարտադիր վարքագծի կանոններ *(ՍԴՈ–677, 7 փետրվարի, 2007 թ.):* Սահմանադրության՝օրինականության սկզբունքին վերաբերող 6-րդ հոդվածի համաձայն՝ *պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, լիազորող նորմերը պետք է համապատասխանեն* ***իրավական որոշակիության սկզբունքին****:* Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ *հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով* ***որոշակի****, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:* Հիմնական իրավունքների և ազատությունների		

		սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը: Սահմանադրության՝ վերը նշված դրույթների ուսումնասիրությունից բխում է, որ բոլոր դեպքերում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքը կամ իրավունքի սահմանափակումը կարող է նախատեսված լինել կամ Սահմանադրությամբ, կամ օրենքով, կամ միջազգային պայմանագրով, այլ ոչ թե այլ իրավական ակտով: **Այլ նորմատիվ, ինչպես նաև անհատական իրավական ակտերով չեն կարող ամրագրվել կամ սահմանվել իրավունքներ կամ իրավունքի սահմանափակումներ** *(ՍԴՈ–1137, 4 փետրվարի, 2014 թ.)*: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ օրենքը պետք է ձևակերպված լինի բավարար հստակությամբ, ինչը հնարավորություն կտա ֆիզիկական և իրավաբանական անձանց ողջամտորեն կանխատեսել իրենց վարքագծի իրավական հետևանքները: Օրենքը պետք է օժտված լինի իրավունքի գերակայությունից բխող այնպիսի որակական հատկանիշներով, ինչպիսիք են **հասանելիությունը և կանխատեսելիությունը**: Բացի այդ, օրենքը պետք է ձևակերպվի այնպես, որ մասնավոր անձինք օժտված լինեն հանրային իշխանության կամայական միջամտությունների դեմ արդյունավետ պաշտպանության հնարավորությամբ (տե՛ս Olsson v. Sweden (No. 1), (10465/83) գործով Եվրոպական դատարանի 24.03.1988 թվականի վճիռը, կետ 61): Իրավական որոշակիության սկզբունքի կապակցությամբ Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում արձանագրել է, որ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք» եթե ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ կտա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը (ՍԴՈ-630), վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում (ՍԴՈ-753): Ըստ Սահմանադրական դատարանի՝ իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության (տե՛ս Սահմանադրական դատարանի 02.12.2014 թվականի թիվ ՍԴՈ-1176 որոշումը): Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը,		

		ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ հշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ (տե՛ս Սահմանադրական դատարանի 09.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1213 որոշումը): Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար **կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները**: Իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ *օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը* հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի մասը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանն իր 2012թ. դեկտեմբերի 14-ի ՍԴՈ-1061 որոշման մեջ արձանագրել է. *«8. Սահմանադրական դատարանն իր՝ ՍԴՈ-649, ՍԴՈ-723, ՍԴՈ-758, ՍԴՈ-881, ՍԴՈ-1000 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներով բազմիցս արձանագրել է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքին և այլ իրավական ակտերին հետադարձ ուժ հաղորդելու անթույլատրելիությունը, կարևորելով, որ անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքը՝ իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ, կոչված է ապահովելու **լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքը**» (ՍԴՈ-1326):* Այսպիսով՝ իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի **գերակայությունը**, որի ապահովման գլխավոր պահանջներից են **իրավական որոշակիության սկզբունքը**, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի **օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների**՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի: Իրավական որոշակիության սկզբունքին անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում: Նշվածի համատեքստում անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև *օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի հարցին:* Սահմանադրության 73-րդ հոդվածի		

		համաձայն՝ *անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն, անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:* «Նորմատիվ իրավական ակերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով:* *2. Սահմանադրության 73-րդ հոդվածին համապատասխան՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն, իսկ անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:* *(…)* *4. Ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտի կամ դրա մասի գործողությունը տարածվում է մինչև դրա ուժը կորցնելու օրը գործող հարաբերությունների վրա, եթե օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին նորմատիվ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:»:* Սահմանադրությամբ՝ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոնակարգումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումն **ընդհանուր կանոն է,** իսկ այդ ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝**բացառություն ընդհանուր կանոնից**: Այս մոտեցումը բխում է **իրավական որոշակիության, օրենսդրության նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների, մարդու իրավունքների երաշխավորման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման նկատառումներից** *(ՍԴՈ–1000, 29 նոյեմբերի, 2011 թ.):* Անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի մերժման սկզբունքը հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա: Նման պարտավորություն է նաև ստանձնել Հայաստանի Հանրապետությունը մի շարք միջազգային պայմանագրերով *(ՍԴՈ–723, 15 հունվարի, 2008 թ.):* Օրենքի դրույթների հետադարձ կիրառման առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ հետադարձ ուժի արգելման սկզբունքը		

		վերաբերելի է միմիայն այն դեպքերին, երբ օրենքի փոփոխման պատճառով անձի, ով գտնվում է արդեն իսկ օրենքով կարգավորված հարաբերությունների մեջ, ունի որոշակի իրավունքներ և պարտականություններ, իրավական վիճակը վատթարանում է, նա զրկվում է իրավունքներից կամ սահմանափակվում է այդ իրավահարաբերությունների ուժով նրա իրավունքի իրացումը *(ՍԴՈ–1224, 7 հուլիսի, 2015 թ.)*: Օրինաստեղծ գործունեության խնդիրն է ապահովել Սահմանադրությամբ նախատեսված իրավունքների ու ազատությունների **երաշխավորված** և **համալիր** իրացումը՝ որպես իրավունքի գերակայության, իրավական պետության կայացման ու զարգացման անհրաժեշտ նախապայման: Մասնավորապես, իրավակարգավորման ձևերի ու միջոցների ընտրությունը, դրանցով անձանց իրավունքների գործադրման առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու օրինաչափ նպատակ հետապնդելը չեն կարող իրացվել ի հաշիվ սահմանադրաիրավական որևէ նորմի ու սկզբունքի անտեսման: Իրավունքի գերակայության սկզբունքից ելնելով, ինչպես նաև օրենսդրական տեխնիկայի տեսանկյունից անհրաժեշտ է իրավական ակտի փոփոխության կամ լրացման արդյունքում նոր իրավակարգավորումները <u>ժամանակի մեջ և անձանց նկատմամբ գործողության մեջ դնելու հստակ կանոնների պահպանումը</u>՝ նրանց իրավունքների իրացման իրավաչափ պայմանների երաշխավորման նպատակով: Դա առավել ևս կարևոր է այն դեպքերում, երբ խնդիրն առնչվում է հնարավոր փոփոխությունների արդյունքում անձի իրավունքների իրացման պայմանների խստացմանը *(ՍԴՈ–1061, 14 դեկտեմբերի, 2012 թ.)*: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օրենսդրությունն ստատիկ երևույթ չէ, այն կարող է և պետք է ենթարկվի դինամիկ փոփոխության՝ մշտապես կատարելագործվելով տնտեսական զարգացմանը, տեղի ունեցող միջազգային ինտեգրման գործընթացներին, հասարակական հարաբերությունների վերափոխմանն ու մի շարք այլ գործոններին համահունչ: Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանը կարևորել է օրենսդրական փոփոխությունների գործընթացի <u>կայունությունն ու ներդաշնակությունը, օրենքների փոփոխման հիմնավորվածությունն ու օբյեկտիվ անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն է ընձեռում իրավունքի սուբյեկտին իրենց վարքագիծը համապատասխանեցնել փոփոխվող օրենսդրական նորմերին՝ թույլ չտալով իրավակիրառ մարմինների կողմից ցուցաբերված **սուբյեկտիվիզմի դրսևորում և հայեցողության ընդլայնում:**</u> Մասնավորապես, սահմանադրական դատարանը կարևորում է իրավական դրույթների փոփոխության, լրացման համատեքստում օրենսդրական նորմերի **հստակության ու որոշակիության ապահովումը** *(ՍԴՈ–1176, 2 դեկտեմբերի, 2014 թ.)*:		

		3. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի *նորմատիվ իրավական ակտի կառուցվածքին վերաբերող* 13-րդ հոդվածի համաձայն՝ *«(…)4. Նորմատիվ իրավական ակտն ունենում է* ***անցումային դրույթներ, եթե՝*** *1) նորմատիվ իրավական ակտը* ***լրիվ գործողության մեջ դնելու*** *համար պահանջվում են ժամկետներ կամ որոշակի պայմաններ, կամ* *2) որոշակի ժամկետների (սահմանափակ ժամանակահատվածի) կամ նորմատիվ իրավական ակտի հիմնական մասով սահմանված պայմանների համար* ***անհրաժեշտ է սահմանել իրավական ակտի հիմնական մասով սահմանված նորմերից տարբերվող այլ նորմեր****, կամ* *3) նորմատիվ իրավական ակտի հիմնական մասով սահմանված նորմերի ուժի մեջ մտնելուց հետո* ***անհրաժեշտ է սահմանել ըստ որոշակի անձանց շրջանակի կամ տարածքի՝ ակտի հիմնական մասով սահմանված նորմերի գործողության համար այլ նորմեր****:* *5. Եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են նաև՝* *1) օրենսդրական ակտի այն մասերը, որոնք գործելու են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից.* *2) ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը:* *6. Նորմատիվ իրավական ակտը պարունակում է անցումային դրույթներ, եթե անձի <u>իրավական վիճակը բարելավող նորմատիվ իրավական ակտին նախատեսվում է տալ հետադարձ ուժ, կամ անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտին հետադարձ ուժ տալու համար անհրաժեշտ է սահմանել համապատասխան նորմեր</u>: Այս դեպքում նորմատիվ իրավական ակտի անցումային դրույթներով սահմանվում են՝* *1) նորմատիվ իրավական ակտը կամ դրա այն մասերը, որոնց տրվում է հետադարձ ուժ.* *2) հետադարձ ուժ տալու իրավակարգավորումների (ժամկետների, պայմանների, անձանց շրջանակի) համար անհրաժեշտ համապատասխան նորմեր:* *7. Նորմատիվ իրավական ակտի եզրափակիչ մասը և անցումային դրույթները կարող են շարադրվել առանձին գլուխների կամ հոդվածների կամ կետերի ձևով՝ սույն օրենքով սահմանված կարգով: (…)»:*		

		4. Հիմք ընդունելով սույն եզրակացության նախորդող կետերում մեջբերված իրավական դրույթները և դիրքորոշումները, ինչպես նաև կատարված դիտարկումները՝ հանգում ենք հետևյալին. ▪ «Գնումների մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով «Գնումների մասին» օրենքի անցումային դրույթին վերաբերող 57-րդ հոդվածի 4-րդ մասը նոր խմբագրությամբ շարադրելիս պետք է հաշվի առնել դրույթի իրացված լինելու աստիճանը, մասնավորապես՝ 2017 թվականի ապրիլի 25-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա արդեն իսկ տարածվել և կիրառվել են «Գնումների մասին» օրենքի կարգավորումները: Հետևաբար՝մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը որոշակի շրջանակի գործարքների վրա օրենքի ուժը չտարածելու կարգավորումը չի կարող նախատեսվել իրավական տեխնիկայի կանոնների և արդեն իսկ իրացված հարաբերությունների հետադարձ կարգավորման անհնարինության տրամաբանության տեսանկյունից: ▪ «Գնումների մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծում բացակայում են դրանով կատարվող փոփոխությունների և լրացման արդյունքում նախատեսվող կարգավորումների իրացման վերաբերյալ անցումային դրույթները: Մասնավորապես՝ առկա չեն մինչ փոփոխություններ և լրացում կատարելու մասին օրենքի ուժի մեջ մտնելը ծագած, սակայն դեռևս ավարտին չհասած գործընթացների վերաբերյալ առանձնահատուկ կարգավորումներ, որոնք հնարավորություն կտան ապահովելու այդ գործընթացների ավարտը՝ որոշակիության, օրինականության, անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի մերժման սահմանադրական սկզբունքների և անձի լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի պահպանմամբ: ▪ «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 15-րդ հոդվածով «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 30-րդ հոդվածում առկա կարգավորումը, որի համաձայն՝ *մինչև Օրենքն ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ներդրումային ծրագրերով իրականացվող կամ դրանց հիման վրա իրականացվելիք ՊՄԳ* ***ծրագրերի իրականացման կարգը և դրանց նկատմամբ կիրառելի պահանջները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից,*** լրացնում է «Գնումների մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով՝ «Գնումների մասին» օրենքի 57-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 4-րդ մասի կարգավորմանը՝ նախատեսելով, որ այն հարաբերությունները, որոնց վրա այլևս չեն տարածվելու «Գնումների մասին» օրենքի կարգավորումները,		

		ենթակա են կարգավորման ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով: Սույն կարգավորման վերաբերյալ կիրառելի է նույն նկատառումը՝ դրույթը նոր խմբագրությամբ շարադրելիս պետք է հաշվի առնել դրույթի իրացված լինելու աստիճանը: ▪ Նախագծի 15-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 30-րդ հոդվածում առկա կարգավորումը, որով Կառավարությունը լիազորվում է ՊՄԳ ծրագրերի իրականացման կարգը և դրանց նկատմամբ կիրառելի պահանջները սահմանելուն, չի բավարարում իրավական որոշակիության և օրինականության սահմանադրական սկզբունքներին: Մասնավորապես՝ անձանց իրավունքը կամ իրավունքի սահմանափակումը կարող է նախատեսված լինել կամ Սահմանադրությամբ, կամ օրենքով, կամ միջազգային պայմանագրով, այլ ոչ թե այլ իրավական ակտով: Այլ նորմատիվ, ինչպես նաև անհատական իրավական ակտերով չեն կարող ամրագրվել կամ սահմանվել իրավունքներ կամ իրավունքի սահմանափակումներ: Տվյալ իրավիճակում ՊՄԳ ծրագրերի իրականացման գործընթացում անձանց իրավունքների սահմանափակման հիմքերը և ծավալը նախատեսված չեն օրենսդրական մակարդակում: ▪ «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում բացակայում են դրանով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման նախատեսվող ժամկետների, ինչպես նաև օրենսդրական ակտի՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ուժի մեջ մտնելու պահից գործող մասերի վերաբերյալ անցումային դրույթները: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարծում ենք, անհրաժեշտ է ապահովել իրավական ակտերի փոփոխության և լրացման արդյունքում նոր իրավակարգավորումները ժամանակի մեջ և անձանց նկատմամբ գործողության մեջ դնելու **հստակ կանոնների** պահպանումը՝ նրանց իրավունքների իրացման իրավաչափ պայմանների երաշխավորման նպատակով:		